

# ՆԱԻԱՍԱՐԳ

ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ

ԱԶԳԻԱԿ

Բ. ՏԱՐԻ

ԹԻ 5 (17)

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003

## ՅՈՅՍԵՐ ՆԵՐՇՆՉՈՂ ՏԱՐԵՇՐՉԱՆ ՄԸ

**Լ**իրանաճահայության մարզական տարին ընդհանուր առմամբ եղաւ յաջող, սակայն անոր արժեւորումը կատարողը նախելառաջ պէտք է կանգ առնէ այս տարուան ընթացքին արձանագրուած արդիւնքներու եւ կատարուած նախաձեռնութիւններուն ներշնչած յոյսերուն վրայ՝ մօտիկ ապագայի հաշուոյն:

Ֆուտպոլի հայկական զոյգ խումբերը բարձրացան Ա. դասակարգ, իրենց արժանատր տեղը: Սակայն այնտեղ մնալը կ'ենթադրէ հսկայական ճիգ, ի վերջոյ ոչ մէկը մեզ պիտի պահէ Ա. դասակարգ, որովհետեւ «արժանի ենք» այդտեղ ըլլալու: Այս իմաստով ողջունելի են Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան նախաձեռնած միջմասնաճիւղային ֆուտպոլի մրցաշարքերը, որոնք նոր աւիշ կրնան ներարկել եւ յառաջիկայ տարիներուն երիտասարդ ֆուտպոլիստներ «մատակարարել» ներկայացուցչական կազմին:

Պասքեթպոլի մէջ Անդրանիկի տղոց եւ աղջկանց եւ Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի աղջկանց կազմերուն արդիւնքները լաւ էին եւ ակնկալելիքները շատ են, սակայն այստեղ նոյնպէս ողջունելիք պասքեթի դպրոցներու աշխուժ գործունէութիւնն է:


Փինկ-փոնկի մէջ Հ.Մ.Ը.Մ.ը ներկայացնող մարզիկներու նոր սերունդը արդէն ինքզինք հաստատած է լիրանաճեան եւ համաարաբական մակարդակներու վրայ, եւ թէեւ որոշ տիտղոսները կարելի չեղան պահել անցնող տարեշրջանին, սակայն զգալի է, թէ այս մարզաձեւը կը գտնուի յարատեւ վերելքի մէջ: Այստեղ նոյնպէս նոր անուններու յայտնութիւնը ողջունելի է:

Նոյնը կարելի է ըսել Հ.Մ.Ը.Մ.ի ճատրակի դպրոցներուն մասին, որոնք աշխուժ գործունէութիւն կը տանին եւ արդէն նոր անուններ սկսած են իրենց մասին մելան հոսեցնել:

Տարեշրջանին արձանագրուած յաղթանակները տօնելու եւ պարտութիւնները մոռնալու մարտավարութիւնը կարճատեսութեան հետեւանք է: Թափ տանք մեր կրտսերներուն եւ նեցուկ կանգնինք նոր սերունդին, որովհետեւ անոնք են միայն, որ կրնան մեզ դուրս բերել տիտղոսներու երաշտէն, անոնք եւ միայն անոնք, ոչ՝ օտար մարզիկները:




Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ ՄԱՍՆԱՃԻԳԻ



ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ ՊԱՍԿԵԹԻ ԱՂԶԿԱՆՑ Ա. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԻՐ ԽՈՒՄԲԸ

Տեսնել էջ 2



ՎԻԳ ՏԱՐՉԻՆԵԱՆ  
ՊԻՏԻ ԴԱՌՆԱՅ  
2004Ի ԱՍՏՂԸ

Տեսնել էջ 6

# Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ ՄԱՍՆԱԾԻՒՂԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ ՊԱՍՔԵԹԻ ԱՂՋԿԱՆՑ Ա. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԻՐ ԽՈՒՄԲԸ

2003 - 2004 եղանակի նախօրեակին, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս մասնաճիղի վարչության կազմակերպությամբ, Շաբաթ, 22 նոյեմբերի երեկոյան ժամը 6:30ին «Աղբալեան - Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրին մէջ տեղի ունեցաւ մասնաճիղի պասքէթի աղջկանց Ա. դասակարգի խումբի ներկայացում՝ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական եւ Շրջանային վարչութեան անդամներու, պասքէթպոլի ֆետերասիոնի նախագահ Ժան Համմամի, Պորճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրիեանի, այլ քաղաքապետներու, պաշտօնական անձնատրուքիներու եւ հոծ բազմութեան ներկայությամբ:

Ձեռնարկին բացման խօսքը արտասանեց Անժելիք Սապունճեան, որ բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ ներկայացուց օրուան յայտագիրը:

Մասնաճիղի մարզական կեանքը ներկայացնող *Վիտէօ* երիզի ցուցադրութենէն ետք, պասքէթի կրտսերներու խումբը հանդէս եկաւ մարզական քանի մը ելոյթներով, որուն յաջորդեց մասնաճիղի պասքէթի աղջկանց Ա. դասակարգի խումբի ներկայացում:

Մարզիկներուն անունով խօսք առաւ Սեմտի Սիմոնեան, որ ըսաւ,

թէ Հ.Մ.Ը.Մ.ի անունը կրող մարզական խումբի անդամակցիլ կը նշանակէ գործել եւ խաղալ այդ ոգիով: Ան նշեց, թէ խումբին մէջ տիրական է Հ.Մ.Ը.Մ.ականի մարզական ոգին եւ շունչը, որոնք մրցումները կը վերածեն հաճելի մրցակցութիւններու:

Մասնաճիղի վարչութեան կողմէ խօսք առաւ Թորոս Մեսրոպեան, որ շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք օժանդակեցին եւ կ'օժանդակեն մասնաճիղի եւ անոր կեանքի բարգաւաճման եւ զարգացման: Ան նշեց, թէ իւրաքանչիւր անհատ իր տալիքը ունի մասնաճիղին, պատասխանատուէն մինչեւ ամենէն փոքր մոկլին, որովհետեւ հաւաքական ուժով տեղի կ'ունենան նուաճումները:

Թ. Մեսրոպեան նշելով, թէ Անթիլիաս մասնաճիղը ունի իր մարզական եւ սկստական զանազան խաղերու եւ տարիքներու խումբեր հաստատեց, որ անոնք ապագան կը դիտեն նոր յոյսերով եւ երազներով:

Ձեռնարկին փակման խօսքը արտասանեց Լիբանանի պասքէթի ֆետերասիոնի նախագահ Ժան Համմամ, որ գնահատելով Անթիլիաս մասնաճիղի աշխատանքները, յաջողութիւն եւ յարատեւ վերելք մաղթեց անոր:


## ԼԻԲԱՆԱՆԻ ԱՂՋԿԱՆՑ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԹԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐԸ

30 նոյեմբերին սկսաւ պասքէթպոլի Լիբանանի աղջկանց ախոյեանութիւնը, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն հայկական երեք խումբեր՝ Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս, Անդրանիկ Սին Էլ Ֆիլ եւ Անդրանիկ Պէյրութ:

Ստորեւ կը ներկայացնենք երթի մրցումներուն յայտագիրը.

ԱՌՍՋԻՆ ԾԱՔԱԹ	ԺԱՄ	ՄՐՑՈՒՄ	ԴԱՇՏ	
ԹՈՒԱԿԱՆ	30/11/2003	14:30	Անդրանիկ Ս. - Անդրանիկ Պ.	Անդրանիկ
		20:00	Սատաքա - Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս	Սաժէս
	2/12/2003	18:00	Սաժէս - Անիպալ	Ղազիր
	20:00	Ապնա Նիպթոն - Ռիատի	Մըրի Համալիր	
ԵՐԿՐՈՐԴ ԾԱՔԱԹ	7/12/2003	14:30	Անդրանիկ Պ. - Անիպալ	Անդրանիկ
		19:00	Անդրանիկ Ս. - Սատաքա	Անդրանիկ
	11/12/2003	18:00	Ռիատի - Սաժէս	Ռիատի
	20:00	Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս - Ապնա Նիպթոն	Մըզհէր	
ԵՐՐՈՐԴ ԾԱՔԱԹ	13/12/2003	14:30	Անիպալ - Ռիատի	Չահլէ
		18:00	Սատաքա - Անդրանիկ Պ.	Սաժէս
	17/12/2003	18:00	Սաժէս - Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս	Ղազիր
	20:00	Ապնա Նիպթոն - Անդրանիկ Ս.	Մըրի Համալիր	
ՉՈՐՐՈՐԴ ԾԱՔԱԹ	19/12/2003	20:00	Անդրանիկ Պ. - Ռիատի	Անդրանիկ
		20:00	Սատաքա - Ապնա Նիպթոն	Սաժէս
	20/12/2003	20:00	Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս - Անիպալ	Մըզհէր
	20:00	Անդրանիկ Ս. - Սաժէս	Անդրանիկ	
ՀԻՆՊԵՐՈՐԴ ԾԱՔԱԹ	3/1/2004	19:00	Սաժէս - Սատաքա	Ղազիր
		20:00	Ապնա Նիպթոն - Անդրանիկ Պ.	Մըրի Համալիր
	4/1/2004	19:00	Անիպալ - Անդրանիկ Ս.	Չահլէ
	20:00	Ռիատի - Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս	Ռիատի	
ՎԵՑԵՐՈՐԴ ԾԱՔԱԹ	7/1/2004	18:00	Անդրանիկ Պ. - Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս	Անդրանիկ
		20:00	Անդրանիկ Ս. - Ռիատի	Անդրանիկ
	11/1/2004	20:00	Սատաքա - Անիպալ	Սաժէս
	20:00	Ապնա Նիպթոն - Սաժէս	Մըրի Համալիր	
ԵՕԹՆԵՐՈՐԴ ԾԱՔԱԹ	14/1/2004	20:00	Սաժէս - Անդրանիկ Պ.	Ղազիր
		20:00	Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս - Անդրանիկ Ս.	Մըզհէր
	15/1/2004	20:00	Անիպալ - Ապնա Նիպթոն	Չահլէ
	20:00	Ռիատի - Սատաքա	Ռիատի	

ՇԱՆՐԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ



# ԵՌԱԳՈՅՆԷ ԹՈՒՐԲԻՈՅ ԳՐՕՇԱԿԷՆ ԲԱՐՁՐ ԾԱԾԱՆԵՑԱԿ

Վանքուվրի մեջ տեղի ունեցող աշխարհի ախոյեանութեան մրցումներում Հայաստան ապահովեց իր առաջին եւ միակ մետալը, շնորհիւ Գէորգ Դաւթեանի:

Արդարեւ, 77 քկ. տղոց մրցումներում, Դաւթեան արաշէի եւ էփոլէ ժըթէի ընթացքին յաջորդաբար բարձրացուց 160 եւ 195 քիլոկրամ եւ արժանացաւ արծաթ մետալին: Թուրքիոյ ներկայացուցիչ Ռէյհան Արապաճիօլլու հանդիսացաւ երրորդ՝ հակառակ անոր որ նոյն ծանրութիւնները բարձրացուցած էր, որովհետեւ Արապաճիօլլու Դաւթեանէն ծանր կը կշռէր:

Ոսկի մետալին տիրացաւ Իրանի ներկայացուցիչ Ֆալահաթի Մոհամէտ Նէճատ (155 քկ. + 202,5 քկ.):

### ՉԱՆՈՅԵԱՆ ԱՄՏՐԱԼԻՈՅ ՇՆՈՐՀԵՑ ՊՐՈՆՁԷ ՄԵՏԱԼ ՄԸ

Ծանրաբարձութեան աշխարհի ախոյեանութեան ճրդ օրում մրցումներում Հայաստանը ներկայացնող Տիգրան Քամալեան եւ Գէորգ Ալեքսանեան չտուին իրենց մէ սպասուածը եւ գրաւեցին 85 քկ. կշիռքային դասակարգի վերջնական դասաւորման 16րդ եւ 17րդ ոչ նախանձելի դիրքերը:

Միեւնոյն կշիռքային դասակարգի մրցումներում այլ հայ մը՝ Սերգօ Չախոյեան, այս անգամ Աւստրալիան ներկայացնող արաշէի մրցումներում բարձրացուց 172,5 քկ., իսկ էփոլէ ժըթէի ընթացքին՝ 205 քկ. եւ գրաւեց ընդհանուր դասաւորման 3րդ դիրքը՝ ռումանացի Վալերիու Քալանսէայի (167,5 քկ. + 215 քկ.) եւ չինացի Եուան Աիճունի (170 քկ. + 212,5 քկ.) ետին:

Նշենք, որ արաշէի մրցումներում Չախոյեանի արդիւնքը լաւագոյնն էր, իսկ էփոլէ ժըթէի ճակատումներում ան գրաւեց 3րդ դիրքը:

## ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀ

### ՉԻԱՐՇԱԿ. «ԿՈՎԿԱՍԻ ԲԱԺԱԿ»

#### ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ՝ ԱՆՄՐՅԵԼԻ

Զիարշաւի հայրենի վարպետներ Նորայր Ստեփանեան, Ռոպէրթ Խաչատուրեան եւ Գէորգ Յովհաննէսեան Թիֆլիսի մէջ տեղի ունեցող միջազգային մրցաշարքին գրաւեցին առաջին երեք դիրքերը: Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը կը բերէին մարզիկներ՝ Հայաստանէն, Վրաստանէն եւ Ազրպէյճանէն:

Անհատական մրցումներու առաջին դիրքը գրաւող Նորայր Ստեփանեան, որ ի դէպ Հայաստանի ձիարշաւ ֆետերասիոնի գլխաւոր քարտուղարն է, շահեցաւ «Պի. Էմ. Տապիոու 315» ինքնաշարժ մը:

### ՃԱՏՐԱԿ. ԱՇԽԱՐՀԻ ԿՐՏՍԵՐՆԵՐՈՒ ԱՆՈՑԵԱՆՈՒԹԻՒՆ

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐԸ

#### ՉԱՐԴԱՐԱՅՈՒՑԻՆ ԻՐԵՆՑ ՎՐԱՅ ԴՐՈՒԱԾ ՅՈՅՍԵՐԸ

Յունաստանի Հալքիտիքի քաղաքին մէջ շաբաթավերջին իրենց աւարտին հասան մինչեւ 10, 12, 14, 16 եւ 18 տարեկան աղջկանց եւ տղոց աշխարհի ախոյեանութեան մրցումները, որոնց իրենց մասնակցութիւնը բերած էին 87 երկիրներէ ժամանած շուրջ հազար վարպետներ:

Հայաստանը ներկայացնող փոքրիկներն ու պատանիները արձանագրեցին միջակ արդիւնքներ: Անոնց մէջ լաւագոյն արդիւնքը արձանագրողը եղաւ 10 տարեկանէն վար դասակարգին ախոյեանութեան ճրդ դիրքը գրաւող Հայկ Թամազեան (8 կէտ): Միեւնոյն տարիքային դասակարգին մէջ 12րդ եւ 13րդ դիրքերը գրաւեցին յաջորդաբար Սամուէլ Տէր Սահակեան (Եւրոպայի ախոյեան) եւ Գրիգոր Տիլանեան. երկուքն ալ ապահոված էին 7,5 կէտ:

12 տարեկանէն վար խմբակին մէջ Հրայր Սիմոնեան գրաւեց 10րդ դիրքը ապահովելով 7,5 կէտ: Ռոպէրթ Յովհաննէսեան գրաւեց 15րդ դիրքը՝ 7 կէտով: Աղջկանց մրցումներում Շուշաննա Սարգիսեան հաւաքեց 5 կէտ:

14 տարեկանէն վար խմբակին մէջ Զաւէն Անդրէասեան գրաւեց 10րդ դիրքը (7,5 կէտ):

Հայաստանի միւս ներկայացուցիչները չկրցան տեղեր ապահովել վերջնական դասաւորման բարձրագոյն դիրքերում վրայ:

### 2004Ը՝ ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՏԱՐԻ

Հալքիտիքի մէջ իր աւարտին հասած ՖԻՏԷԻ խորհրդաժողովին որոշում առնուեցաւ 2004ը յայտարարելու «Տիգրան Պետրոսեանի Տարի»:

Նշենք, որ Տիգրան Պետրոսեան 1963-1969 հանդիսացած է ճատրակի աշխարհի ախոյեան:

### ՓԻՒՆԻԿ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՅԵԱՆ

Հայաստանի ֆուտպոլի ախոյեանութեան 26րդ հանգրուանի մրցումներում ծիրէն ներս, Շաբաթ 8 Նոյեմբերին Երեւանի «Փիւնիկ»ը 5 - 0 արդիւնքով ջախջախիչ պարտութեան մատնեց «Տիւնասօ - 2000»ը, ախոյեանութեան աւարտէն երեք հանգրուան առաջ ապահովելով ախոյեանի տիտղոսը:

### ՀԱՅ ՅՈՒԹՊՈԼԻՍՏՆԵՐ ԴԷՊԻ ՄԱՐՍԷՅԻ ՕԼԻՄՓԻՔ

Երեւանի «Փիւնիկ»ի ֆուտպոլիստներ Էտկար Մանուչարեան (յառաջապահ) եւ Էտէլ Ապուլա Պետէ (բերդապահ) փորձեր կը կատարեն Մարսէյի Օլիմպիքի հետ: Իսկ Մոլտաւիոյ ախոյեան Տիրասպոլի «Շերիֆ» խումբը հետաքրքրուած է Գալուստ Պետրոսեանով: Աւելի ուշ կը յստականայ թէ այս մարզիկները պիտի միանա՞ն նշեալ կազմերուն:

Հ.Մ.Բ.Մ. ԱՆԹՐԻԼԻԱՍ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ԱՂՋԿԱՆՑ  
2003 - 2004 ՏԱՐԵՇԻՉՊԵՆԻ ՊԱՍՔԵԹԻ ԽՈՒՄԲԸ



Անուն: Սանան Մարգարեան  
Ծննդեան թուական: 22 - 1 - 1976  
Հասակ: 170 սմ.  
Ծանրություն: 58 քկ.  
Նախկին ակումբներ: Սաժէս  
Թի: 5



Անուն: Ուստատ Մուղարպէլ  
Ծննդեան թուական: 10 - 4 - 1981  
Հասակ: 168 սմ.  
Ծանրություն: 58 քկ.  
Նախկին ակումբներ: Մոն Լա Սալ,  
Սատարա, Էօ.Էն.Պէ.  
Թի: 8



Անուն: Մակալի Սաֆար  
Ծննդեան թուական: 2 - 7 - 1980  
Հասակ: 180 սմ.  
Ծանրություն: 69 քկ.  
Նախկին ակումբներ: Անդրանիկ,  
Սաժէս, Սատարա  
Թի: 4



Անուն: Ալին Լոշխանեան  
Ծննդեան թուական: 1 - 9 - 1983  
Հասակ: 170 սմ.  
Ծանրություն: 53 քկ.  
Նախկին ակումբներ: -  
Թի: 9



Անուն: Ալիք Թապաքեան  
Ծննդեան թուական: 11 - 3 - 1985  
Հասակ: 175 սմ.  
Ծանրություն: 57 քկ.  
Նախկին ակումբներ: -  
Թի: 6



Անուն: Կրէյս Սթանպուլեան  
Ծննդեան թուական: 17 - 12 - 1978  
Հասակ: 160 սմ.  
Ծանրություն: 61 քկ.  
Նախկին ակումբներ: Հ.Մ.Բ.Մ.  
Անթիլիաս, Հ.Մ.Բ.Մ. Պէյրուք  
Թի: 10



Անուն: Սենտի Սիմոնեան  
Ծննդեան թուական: 9 - 2 - 1979  
Հասակ: 170 սմ.  
Ծանրություն: 58 քկ.  
Նախկին ակումբներ: -  
Թի: 7 (խմբապետ)



Անուն: Մարալ Տէմիրեան  
Ծննդեան թուական: 10 - 8 - 1980  
Հասակ: 167 սմ.  
Ծանրություն: 50 քկ.  
Նախկին ակումբներ: Հ.Մ.Բ.Մ.  
Պաուլրիէ, Պուրճ Համուտ,  
Պէյրուք  
Թի: 11



Անուն: Սուլա Աբրահամեան  
 Ծննդեան թուական: 13 - 8 - 1988  
 Հասակ: 160 սմ.  
 Ծանրություն: 50 քկ.  
 Նախկին ակումբներ: -  
 Թի: 12



Անուն: Սարին Գույումճեան  
 Ծննդեան թուական: 23 - 1 - 1986  
 Հասակ: 168 սմ.  
 Ծանրություն: 51 քկ.  
 Նախկին ակումբներ: -  
 Թի: 5



Անուն: Վերա Վերթովա  
 Ծննդեան թուական: 26 - 1 - 1975  
 Հասակ: 190 սմ.  
 Ծանրություն: 80 քկ.  
 Նախկին ակումբներ: Ռուսիոյ,  
 Լաթվիոյ, Փորթուգալի,  
 Ֆինլանտալի խումբեր  
 Թի: 13



Անուն: Նաթալի Սեւանեան  
 Ծննդեան թուական: 2 - 2 - 1988  
 Հասակ: 170 սմ.  
 Ծանրություն: 52 քկ.  
 Նախկին ակումբներ: -  
 Թի: 14



Անուն: Յոլին Գազանճեան  
 Ծննդեան թուական: 7 - 3 - 1986  
 Հասակ: 175 սմ.  
 Ծանրություն: 64 քկ.  
 Նախկին ակումբներ: -  
 Թի: 14



Գլխաւոր մարզիչ  
 Սերբէյ Չիպուրքին



Անուն: Դալար Արսլանեան  
 Ծննդեան թուական: 15 - 6 - 1983  
 Հասակ: 175 սմ.  
 Ծանրություն: 68 քկ.  
 Նախկին ակումբներ: -  
 Թի: 15



Օգնական մարզիչ  
 Բաֆֆի Գասապեան



ԱՂՋԿԱՆՅ «ՄԱՍԹԸՐՁ»



# ՔԻՄ ՔԼԻՍԹԵՐՉ ՏԻՐԱՑԱՒ ՏԻՏՂՈՍԻՆ

Յաջորդաբար երկրորդ տարին ըլլալով Քիմ Քլիսթերը հանդիսացաւ «Մասթերզ»-ի ախոյեան: Աւարտականին ան 6-2, 6-0 արդիւնքով ջախջախիչ պարտութեան մատնեց Ամելի Մորեսսոն, որ օր մը առաջ մրցաշարքէն դուրս ձգած էր Ժիւսթին Էնէն-Արտէնը:

Իր յաղթանակին համար Քլիսթերը ստացաւ մէկ միլիոն տոլարի նիւթական մրցանակ, սակայն այս յաղթանակը բաւարար չէր որ ան պահէ աշխարհի դասաւորման պարագլուխի դիրքը: Արդարեւ, Ժիւսթին Էնէն-Արտէնն է որ տարեշրջանը աւարտեց առաջին դիրքի վրայ:

ԹԵՆԻՍ. ՅԵՏ ՔԱՓ

## ՄՈՐԵՍՄՕ ՖՐԱՆՍԱՅԻ ԱՊԱՀՈՎԵՑ ՏԻՏՂՈՍԸ

Ֆէտ - քափի ախոյեանութեան աւարտական մրցումը դէմ առ դէմ կը հանէր Ֆրանսան եւ Միացեալ Նահանգները:

Ֆրանսա 4 - 1 արդիւնքով ջախջախիչ յաղթանակ մը արձանագրեց Միացեալ Նահանգներու վրայ: Յաղթանակը կերտողներուն կարգին արժէ յիշել աշխարհի թիւ 4 Ամելի Մորեսսոն, որ Շաբաթ օր 6 - 4, 6 - 3 արդիւնքով տապալեց Լիզա Ռէյմընտը, իսկ 6 - 2, 6 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց Մեկան Շոնեսին:

Ամիլի Լուա, իր կարգին պարտութեան մատնեց Ալեքսանտրա

Սթիւնսընը (6 - 4, 6 - 2), իսկ Մարի Փիրս՝ Մեկան Շոնեսին (6 - 3, 3 - 6, 8 - 6):

Միացեալ Նահանգներու միակ կէտը ապահովեց 47ամեայ Մարթինա Նաւրաթիլովա, որ իր զոյգին՝ Լիզա Ռէյմընտի հետ պարտութեան մատնեց Ամիլի Լուա - Սթեֆանի Քոհէն-Ալորո զոյգը: Այսպէսով, Նաւրաթիլովա ամբողջ 28 տարի անպարտելի մնաց ֆէտ քափի մրցումներուն (39 յաղթանակ):

### Հ. Մ. Ը. Մ.Ի ՏՂՈՑ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ ԿԱՏԱՐԵԼԻՔ ԵՐԹԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

ԾԱԲԱԹ, 29 ՆՈՅԵՄԲԵՐ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Թատամոն Զուր - Հ. Մ. Ը. Մ.	20:00	Աղբալեան
2ՈՐԵՔՇԱԲԹԻ, 3 ԴԵԿՏԵՄԲԵՐ		
Հ. Մ. Ը. Մ. - Սատաքա	22:00	Աղբալեան
ԾԱԲԱԹ, 6 ԴԵԿՏԵՄԲԵՐ		
Ղազիր - Հ. Մ. Ը. Մ.	21:30	Ղազիր
2ՈՐԵՔՇԱԲԹԻ, 10 ԴԵԿՏԵՄԲԵՐ		
Հ. Մ. Ը. Մ. - Նըմէ Սահրա	22:00	Աղբալեան
ԾԱԲԱԹ, 13 ԴԵԿՏԵՄԲԵՐ		
Ռիատի Ֆէյթրուն - Հ. Մ. Ը. Մ.	20:00	Սաժէս Ժըտէյտէ
2ՈՐԵՔՇԱԲԹԻ, 17 ԴԵԿՏԵՄԲԵՐ		
Սանթրալ - Հ. Մ. Ը. Մ.	22:00	Սանթրալ
ԾԱԲԱԹ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ		
Հ. Մ. Ը. Մ. - Էս. Ժի. Էս.	20:00	Աղբալեան
2004		
2ՈՐԵՔՇԱԲԹԻ, 7 ՅՈՒՆՈՒԱՐ		
Քահրապա - Հ. Մ. Ը. Մ.	22:00	Քահրապա
ԾԱԲԱԹ, 10 ՅՈՒՆՈՒԱՐ		
Հ. Մ. Ը. Մ. - Աննուպին Ռիատի	20:00	Աղբալեան
2ՈՐԵՔՇԱԲԹԻ, 14 ՅՈՒՆՈՒԱՐ		
Ռըսոլ Ժունիէ - Հ. Մ. Ը. Մ.	22:00	Ռըսոլ
ԾԱԲԱԹ, 17 ՅՈՒՆՈՒԱՐ		
Հ. Մ. Ը. Մ. - Ահիա Ռիատա	20:00	Աղբալեան

### Հ. Մ. Ը. Մ. ՊԵՅՐՈՒԹ - ՖԻՏԱԱ ՍԱՅՏԱ՝ 65-30

Լիբանանի պասքետպոլի աղջկանց Բ. դասակարգի ախոյեանութեան 2րդ հանգրուանի մրցումներուն, Հ. Մ. Ը. Մ. Պէյրութ արձանագրեց իր երկրորդ յաղթանակը, 65-30 արդիւնքով պարտութեան մատնելով Ֆիտաա Սայտան: Իրենց կատարած առաջին մրցումին, Հ. Մ. Ը. Մ.ի աղջիկները 20-0 արդիւնքով յաղթական դուրս եկան, նկատի ունենալով որ իրենց մրցակիցը՝ Ֆրէր Պէյթ Մէրի դաշտ չներկայացաւ:



3րդ հանգրուանի մրցումներուն, Հ. Մ. Ը. Մ. Պէյրութի մրցակիցը պիտի ըլլայ Պլու Սթարզ:

Խումբին մարզիչը կը հանդիսանայ իրաքցի Թամէր Մուսաֆա, որ նախապէս ալ եղած է խումբին մարզիչ: Նշենք, թէ ան միեւնոյն ժամանակ ալ Հ. Մ. Ը. Մ.ի տղոց ներկայացուցչականին ալ (Բ. դասակարգ) մարզիչն է:

Հ. Մ. Ը. Մ. Պէյրութի աղջկանց խումբը, 2003-2004 եղանակին իր կազմէն ներս կատարեց երկու փոփոխութիւն: Անդրանիկէն խումբին միացաւ Ռանա Ապու Հանա, իսկ Հ. Մ. Ը. Մ. Անթիլիասէն՝ Միրէյ Սվաճեան:

Ստորեւ՝ Հ. Մ. Ը. Մ. Պէյրութի աղջկանց 2003-2004 եղանակի կազմը.

Ռիթա Գէորգեան, Նիքոլ Շուէյրի, Ռանա Ապու Հանա, Ալին Թաթոսեան, Դալար Սողոմոնեան, Դալար Փափիրեան, Ռոզիկ Զոպանեան, Դալար Պէպէճեան, Հիպա Քըսըրուանի, Միրէյ Թորոսեան, Լորիկ Ալեքսանտրեան, Ծովիկ Տէր Ղազարեան, Միրէյ Սվաճեան, Լարա Աշըգեան եւ Էլիան Պիթար:

ՄԱՍԹԸՐԶ

# ՀԱՅԿԱԿԱՆ «ՏԵՐՊԻ»Ն ՎԵՐՉ ԳՏԱՒ ԱԿԱՍԻԻ ՅԱՂԹԱՆԱԿՈՎ



Անտրե Ակասի -Դաիթ Նալպանտեան տաք ճակատումը սուր պայքարէ ետք վերջ գտաւ Ակասիի յաղթանակով:

Արդարեւ, առաջին սէթը թայպրէյթով (12/10) շահելէ ետք Ակասի 3-6 արդիւնքով տեղի տուաւ երկրորդ սէթին, սակայն ինքզինքը հաւաքելով երրորդը աւարտեց ի նպաստ իրեն:

Հարկ է ըսել, որ Նալպանտեան դժբախտ գտնուեցաւ: Իրաւարարը քանի մը վճռական պահերու անարդար գտնուեցաւ զայրոյթ փատճառելով արդէն դիրաբորբոք Նալպանտեանին: Աւելի'ն, առաջին շարքի վրայ նստած ամերիկացի միլիառատէր Ճիմ Մըքլինկվէյլ, որուն 10 միլիոն տոլարի նուիրատուութեամբ կառուցուած է Մասթըրզը հիւրընկալող դաշտը, տեսաբար կը խանգարէր Նալպանտեանը իր «ծափող ջոյններով»: Մրցումի ընթացքին եղաւ պահ մը երբ Նալպանտեան, գեղեցիկ հարուածով մը կէտը շահելէ ետք դարձաւ Մըքլինկվէյլի եւ գոռաց՝ «Հիմա ինչու չես ծափեր»:

Յամենայնդէպս, Նալպանտեան այս տարեշրջանին փաստեց թէ կը հանդիսանայ թենիսի աշխար-

հի հզօրագոյն մարզիկներէն մէկը: Կ'ակնկալենք, որ տարին դասաւորման առաջին ութեակին մէջ աւարտած Նալպանտեան յառաջիկայ տարի կ'արդարացնէ մասնագէտներու ակնկալութիւնները եւ կը սլանայ «վեր, աւելի' վեր»:

«Մասթըրզ» մրցաշարքի աւարտական մրցումը իրար դէմ կը հանէր Ուիմպլըտընի ախոյեան Ռոժէ Ֆետերըրը եւ Աւստրալիոյ բաց մրցաշարքի ախոյեան Անտրե Ակասին: 22ամեայ զուիցերիացին թենիսի խտացեալ դասեր տուաւ 33ամեայ «վեթերան» ամերիկացիին, 6-3, 6-0, 6-4 արդիւնքով յաղթանակ մը արձանագրելով:

88 վայրկեան քրտնելուն համար Ռոժէ Ֆետերըր ստացաւ 1,52 միլիոն տոլար եւ տարին աւարտեց միջազգային դասաւորման երկրորդ դիրքին վրայ:

Ֆետերըր, որ այս տարեշրջանին տիրացաւ 7 այլ մրցաշարքերու տիտղոսներուն, մրցումի աւարտին յայտարարեց. «Այս տարեշրջանի լաւագոյն մրցումներէս մէկն էր այս: Ուրախ եմ ամբողջ տարեշրջանի ընթացքին արձանագրած արդիւնքներովս: Միշտ ալ վերիվայրումներ տեղի կ'ունենան, սակայն կը թուի թէ այս տարին կատարեալ էր»:

Ակասի պարտուած տուն չվերադարձաւ: Ան գրպանեց 7 հարիւր հազար տոլար եւ հանդիսացաւ անցնող 25 տարիներուն «Մասթըրզ»ի աւարտականին հասած մարզիկներուն ամէնէն տարեցը: Նշենք, որ Ակասի նոյն այս մրցաշարքի տիտղոսին տիրացած է միայն մէկ անգամ, 1990ին, պարտութեան մատնելով Շթեֆան Էտպըրկը:

«Քու շարժումդ եւ խաղարկութիւնդ դիտելը ներշնչում է. պատճառ պիտի դառնաս որ աւելի' լաւ խաղամ գալ տարի», ըսաւ Ակասի, իր խօսքը ուղղելով (ոչ' Կրաֆի) Ֆետերըրի...:

